

Ա. ՍԱԼՄԱՆՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
(Bibliographie de l'Arménie) Երևան, 1969 թ.

Հայագիտության անհետաձգելի խնդիրներից է մատենագիտական ու տեղեկատու ուսումնասիրությունների և ձեռնարկների լույս ընծայումը, առանց որի անհնարին է այժմ. պատկերացնել բանասիրության զարգացումը:

Հայագիտությունը զարգանում է աշխարհի տարրեր երկրներում և նրա քարտեզը անընդհատ փոխվում է: Եթե մեր դարի սկզբին խոշոր կենտրոններ էին Վենետիկն ու Վիեննան, Վաղարշապատն ու Պետերբուրգը, Փարիզն ու եվրոպական տարրեր քաղաքները, ապա այսօր կան՝ Երևանն ու Վենետիկը, Վիեննան, Փարիզն ու ամերիկյան մի քանի կենտրոններ: Սակայն ավելի ընդարձակ է հայագիտական ուսումնասիրությունների տարածման շառավիղը: Աշխարհի տարրեր կողմերում լույս են տեսնում ոչ միայն հայագիտական, այլև նրան առնչվող բնագավառների վերաբերյալ բազում հանդեսներ, որոնց էջերում տպագրվում են հայագիտությանը հետազոտություններ և այժմ ամեն մի հարց ուսումնասիրելիս անհրաժեշտ է լիակատար տեղեկություններ ունենալ տվյալ նյութի շուրջը եղած աղբյուրների և ուսումնասիրությունների մասին:

Ահա այսպիսի նպատակներ հետապնդող մի աշխատություն է Ա. Սալմասյանի «Հայկական մատենագիտությունը», որն ընդգրկում է եվրոպական լեզուներով գոյություն ունեցող հայագիտական գրականությունը: Նման աշխատանք կատարողը, բնականաբար, պետք է ձեռքի տակ ունենար բոլոր անհրաժեշտ տեղեկատու աղբյուրները, ուսումնասիրություններն ու հանդեսները, որոնք լրիվ մատչելի են փաթեթյան միջավայրում:

Դեռ մեր դարի սկզբին եվրոպական հայագիտության մատենագիտությունը կազմելու փորձեր են արվել: Կ. Կոստանյանցի¹ և Հ. Պ. Ֆերհայանի² կազմած ցուցակները զուտ այբբենական էին, հայագիտական բոլոր ճյուղերը տալով խառն վիճակում: Իհարկե, որպես առաջին փորձ դրանք արժեքավոր էին, մանավանդ Հ. Պ. Ֆերհայանի աշխատությունը, որը բավական մանրամասն է ու հարուստ: Հայագիտության զարգացմանը զուգընթաց, բնականաբար, պահանջ առաջացավ նյութը բաժանել ըստ բնագավառների: Այս տեսակետից ուշագրավ է Իդա Պրատի³ կազմած «Հայաստանը և հայերը» ցուցակը:

Այս ուղիով է ընթանում նաև Ա. Սալմասյանը, որի համառոտված աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1946 թ., իսկ այժմ ձեռքի տակ ունենք նոր, համալրված հրատարակությունը:

Ա. Սալմասյանը մատենագրական նյութերը բաժանել է 22 գլուխների, որոնցից ամեն մեկը մի առանձին բնագավառ է ընդգրկում: Սկզբում տրված են աշխարհագրությունը, երկրաբանությունը, բուսաբանությունը: Մարդաբանության ու ազգագրության բաժիններից հետո գալիս է պատմագրության հարուստ բաժինը, որը զբաղեցնում է 90 էջ: Հեղինակը ընդգրկել է ոչ միայն նոր ուսումնասիրություններ, այլև որոշ միջնադարյան օտար (հույն, ասորի, արաբ) պատմիչների երկերը:

1 Կ. Կոստանյանց, Հայագիտությունը Արևմտյան եվրոպայում, Թիֆլիզ, 1910:

2 Հ. Պ. Ֆերհայան, Ցուցակ հայագիտական հրատարակութեանց յեւրոպա (1896—1910), Վիեննա, 1919:

3 Ida Pratt, Armenia and the Armenians, New-York, 1919.

որոնք թարգմանված են եվրոպական լեզուներով: Վերջին երկուսուկես տասնամյակում բազմաթիվ գործեր են լույս ընծայել եվրոպացի ուսումնասիրողները՝ Ռ. Գրուսեն, Վ. Մինորսկին, Մ. Կամարը, 2. Դոուսթը և այլն:

Հետաքրքրական է դավաճաբանական գրականության բաժինը, մանավանդ որ այս կարևոր բնագավառում եվրոպական հայագիտությունը անցյալում միշտ էլ արժեքավոր գործ է կատարել և մինչև այժմ էլ կատարում է: Հիշատակության արժանի են պատմությանը սերտորեն առնչվող իրավունքի և տնտեսական առևտրական նյութերը և մանավանդ ճանապարհորդությունների հարուստ բաժինը: Հայկական սփյուռքը ներկայացված է առանձին բաժնով, որը թեև հակիրճ, բայց շատ այժմեական է, քանի որ այս հարցը հատուկ ուսումնասիրման առարկա է Երևանի տարբեր գիտական հիմնարկություններում, ուստի, անկասկած, եվրոպական լեզուներով գրված նյութերը մեծ նշանակություն ունեն այս գործում:

Գրականության-բանահյուսության-դիցաբանության բաժնում, ինչպես նաև այլ մասերում երևում է հայագիտության երախտավոր Ժ. Գարիթի անունը, որը միաժամանակ քրիստոնյա Արևելքի (ասորիներ, ղպտիներ, հայեր, վրացիներ և հաբեշներ) լավագույն գիտակն է ժամանակակից Եվրոպայում: Հայերենը որպես հնդկարոպական լեզու միշտ էլ գրավել է եվրոպացի լեզվաբանների ուշադրությունը և պատահական չէ, որ լեզվաբանության-բանասիրության բաժնում հին անուններին (Հ. Հյուբշման, Ա. Մելե) աղընթեր կան մոր անուններ (Ֆ. Ֆելդի, Է. Բենվեմիստ, Ժ. Դյումեզիլ):

Ծարտարապետության-հնագիտության բաժինը մեծ մասամբ հին նյութեր ունի, իսկ մոր ուսումնասիրությունները մասամբ դուրս են մնացել: Վերջերս իտալերեն և ֆրանսերեն լեզուներով ուսումնասիրություններ լույս տեսան այս բնագավառում սակայն, ըստ երևույթի, Ա. Սալմասյանի մատենագիտությունը ավարտված է եղել

դրանց լույս ընծայումից առաջ: Հայկական ճարտարապետության մասին եվրոպական լեզուներով գրված աշխատությունների վրա անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել մանավանդ այս օրերին, երբ հայկական ճարտարապետության շատ հարցեր սխալ են մեկնաբանվում և թյուրիմացության մեջ գցում գիտական աշխարհը:

Մեծ անելիքներ ունեն եվրոպացի ուսումնասիրողները հայկական դրամագիտության ասպարեզում, քանի որ հայկական դրամների երկու փայլուն ժամանակաշրջանների (Արտաշեսյան և Կիլիկյան) դրամները մեծ քանակությամբ գտնվում են արդի Հայաստանից դուրս՝ Թուրքիայում, Սիրիայում և այլուր: Այդ բնագավառում շնորհակալ աշխատանք է կատարում Պ. Պտուկյանը, որի աշխատությունները հիշված են սույն մատենագիտության մեջ: Հայ արվեստի պատմության մեջ հատուկ ուշադրության առարկա է դարձել մանրանկարչությունը, որի շուրջը Հայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ օր. Սիրարփի Տեր-Ներսեսյանի գրած արժեքավոր աշխատությունները մեծ տեղ են գրավում մատենագիտության համապատասխան բաժնում:

Ա. Սալմասյանը հատուկ բաժին է հատկացրել հայագիտական և հայագիտությանը առնչվող պարբերականներին: Այդ շարքում այսօր հատուկ տեղ ունի Փարիզում հրատարակվող Հայկական ուսմանց հանդեսը (*Revue des Etudes Arméniennes*), որի չորս հատորներին ավելացել է հինգերորդը՝ շնորհիվ նրա իրավասու խմբագիր Հ. Պերպերյանի անխնայ ջանքերի: Մատենագիտության բաժնում հիշված են մեծ թվով ցուցակներ, որոնք ինչքան էլ որ օգտակար են, այսուհանդերձ, դեռ հեռու են մնում կատարելությունից: Այստեղ պետք է առանձնապես ընդգծել Հ. Անասյանի Հայկական մատենագիտություն անունը կրող, բայց, ըստ էության, հայագիտական հանրագիտարանի արժեք ներկայացնող բարձրարժեք աշխատությունը, որը կարող է ուղեցույց լինել մեծ աշխատությունների համար:

Ա. Սալմասյանը տալիս է մի արժեքավոր ուղեցույց, որին այնքան կարիք ունեն հայագիտությունը վերջին տարիներին: Միայն նման աշխատությունների առկայության դեպքում է, որ հայագիտությունը կարող է զարգանալ թե՛ Հայաստանում, թե՛ եվրոպական տարբեր գիտական կենտրոններում, և կարևոր է ընդգծել, որ հեղինակը մեզ հրամցնում է ոչ միայն զուտ հայագիտական, այլև հայագիտությանը առընչվող օժանդակ հարուստ նյութեր: Բազմատեսակ և բազմալեզու աղբյուրների համախմբումն ու գիտական դասակարգումը մեկ ընդհանուր համակարգի մեջ դժվարին գործ է, որը, սակայն, ձեռնհաս կերպով կատարել է նա երկար տարիների քրտնաջան աշխատանքի պտուղը մատուցելով գիտական հասարակայնությանը:

Ա. Սալմասյանի հայկական մատենագիտության լույս ընծայումը Երևանում ուշագրավ երևույթ է առհասարակ հայ իրականության համար: Դա ոչ միայն մի օգտակար ձեռնարկի լույս ընծայում է, այլև վարակիչ օրինակ ի սփյուռս ցրված հայ պատմաբանների ու բանասերների համար, որոնց արժեքավոր աշխատությունները կարող են լույս ընծայվել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հոգացողությամբ: Այսպիսով, կորստից կփրկվեն հեռավոր երկրներում կատարված բազում աշխատություններ, որոնց հրատարակումը, անկասկած, կսատարի հայոց պատմության և բանասիրության զարգացմանը:

Ա. ՏԵՐ.ՂԵՎՈՆԴՅԱՆ